

ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների  
ընդհանուր իրավասության դատարանին

Դիմող - «Հայաստանի Հելսինկյան կոմիտե» Իրավապաշտպան ՀԿ  
ՀՀ ք. Երևան, Պուշկինի Յա  
Նախագահ՝ Ավետիք Իշխանյան

Դիմող - «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ  
ՀՀ ք.Երևան, Այգեստան 11, տուն 43  
Նախագահ՝ Արման Դանիելյան

Դիմող - «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի  
Վանաձորի գրասենյակ» ՀԿ  
ՀՀ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59  
Նախագահ՝ Արթուր Սաքունց

Դիմումատուների ներկայացուցիչ - Էդմոն Հրաչիկի Մարուքյան  
ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Գրիգոր Լուսավորիչի 53/59  
Փաստաբանական գործունեության արտոնագիր 788

Պատասխանող – ՀՀ գլխավոր դատախազ  
ՀՀ ք. Երևան, Վազգեն Սարգսյան փ. 5

## Դ Ի Մ Ո Ի Մ

(Քրեական գործ հարուցելուն պարտավորեցնելու պահանջի մասին)

2010 թվականի սեպտեմբերի 2-ին ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում հասարակական  
դիտորդների խմբի անդամներ՝ Ավետիք Իշխանյանը, Արթուր Սաքունցը և  
Արման Դանիելյանը այցելել են «Նուբարաշեն» ՔԿՀ: Այցելության ընթացքում  
պարզվել է, որ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում 2010 թվականի օգոստոսի 5-ից մինչև  
սեպտեմբերի 1-ը առանց օրենքով նախատեսված հիմքերի պահվել է ՀՀ  
քաղաքացի Սարգիս Մանուկի Պողոսյանը:

Ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ  
փաստաթղթերը.

Ազատագրկվածի քարտում նշված է.

«Մուտք է եղել հիմնարկ 05.08.2010 թվականին և ազատվել է 01.09.2010 թվականին ՀՀ գլխավոր դատախազության թիվ 21/32-570-10 թվականի գրության համաձայն»:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ. Սարգսյանի 05.08.2010 թվականի 21/32-570-10 գրությունը «Նուբարաշեն» ՔԿՀ-ի պետ Տ. Նավասարդյանին և պատճենը Քրեակատարողական վարչության պետ Հ. Հարությունյանին.

«2010 թվականի օգոստոսի 2-ին ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության և «Զվարթնոց» օդանավակայանի ՈԲ աշխատակիցների կողմից ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ է տարվել ԱՄՆ իրավապահ մարմինների կողմից 1344 և 1349 հոդվածներով հանցագործություններ կատարելու մեջ կասկածվող 29.07.2010 թվականից հետախուզվող Սարգիս Մանուկի Պողոսյանը: Վերջինս ՀՀ Քր. դատ. օր-ով սահմանված 72 ժամյա ժամկետը լրանալու կապակցությամբ ազատ է արձակվել քանի, որ չի ստացվել խափանման միջոց կալանք ընտրելու մասին որոշումը: Հաշվի առնելով Ս. Պողոսյանի կողմից կատարված արարքի ծանրությունը, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազի ցուցումով հանձնարարվում է, հիմք ընդունելով ԱՄՆ ինտերպոլի ԱԿԲ-ի կողմից 28.07.2010 թվականի <defusion> տեսքով հրապարակված շրջաբերականը կալանքի վերցնել Ս. Պողոսյանին մինչև ԱՄՆ իրավապահ մարմինների կողմից համապատասխան փաստաթղթերի ստացումը»:

ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետ Հ. Թամամյանի 05.08.2010 թվականի N 373-32-98 գրությունը «Նուբարաշեն» ՔԿՀ-ի պետ Տ. Նավասարդյանին.

«Ուղարկվում է բանկային խարդախության փորձ կատարելու համար ԱՄՆ իրավապահ մարմինների կողմից հետախուզվող ՀՀ քաղաքացի Ս.

Պողոսյանը, 1983 թվականի ծնված ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ պահման ընդունելու և ՀՀ գլխավոր դատախազության վրա հաշվարկելու համար»:

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի պետ Ս. Նավասարդյանի 06.08.2010 թվականի Ե40/18-3-44-44 գրությունը ՀՀ գլխավոր դատախազության վարչության պետ Վ. Ավետիսյանին.

«Հայտնում ենք, որ 05.08.2010 թվականին ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ է տեղափոխվել ԱՄՆ քրեական օրենսգրքի 18 պարբերության 1344 և 1349 հոդվածներով հետախուզվող Ս. Պողոսյանը»:

2010 թվականի սեպտեմբերի 1-ին Ս. Պողոսյանը ազատ է արձակվել «Նուբարաշեն» ՔԿՀ-ից ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Դանիելյանի «Նուբարաշեն» ՔԿՀ-ի պետ՝ Ս. Նավասարդյանին ուղղված 21/32-570-10 գրության հիման վրա, որ բերվում է ստորև.

«Հանձնարարվում է ԱՄՆ իրավապահ մարմինների կողմից հետախուզվող ՀՀ քաղաքացի Ս. Պողոսյանին ազատ արձակել կալանքից»:

2010 թվականի սեպտեմբերի 3-ին դիմումատուները ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում հասարակական դիտորդների խմբի միջոցով դիմել են ՀՀ գլխավոր դատախազին տեղեկացնելով կատարված հանցագործության մասին և խնդրել տեղի ունեցածի կապակցությամբ ձեռնարկել համապատասխան միջոցներ և պատժել մեղավորներին:

2010 թվականի սեպտեմբերի 11-ին թիվ 21/32-570-10 գրությամբ ստացել ենք ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում հասարակական դիտորդների խմբին հասցեագրված ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական կապերի բաժնի պետի պաշտոնակատար՝ Ե. Ավագյանի պատասխանը, որն ըստ էության անտեսել է՝ դիմումատուների կողմից բարձրացված հարցի և կատարված հանցագործության վերաբերյալ օրենքով սահմանված կարգով ընթացքը լուծելու հարցերը:

2010 թվականի հոկտեմբերի 19-ին դիմումատուները՝ «Հանցագործության՝ անձին ակնհայտ ապօրինի կալանավորելու և ակնհայտ ապօրինի կալանքի տակ պահելու մասին» հաղորդում են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին, որով պահանջել են՝ հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածները օրենքով սահմանված կարգով ընթացք տալ ներկայացված հաղորդմանը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-182-րդ հոդվածների կարգով տեղեկացնել ընդունված որոշման մասին:

Դիմումատուները անկալում էին, որ ՀՀ գլխավոր դատախազը պետք է քրեական հետապնդում հարուցեր «Նուբարաշեն» ՔԿՀ-ի պետի և ղեկավարվելով ՀՀ «Դատախազության մասին» օրենքի 44-րդ հոդվածի 5-րդ մասով իր՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի նկատմամբ:

2010 թվականի նոյեմբերի 11-ին ՀՀ գլխավոր դատախազության, միջազգային իրավական կապերի բաժնի պետի ստորագրությամբ պատասխան է տրվել դիմումատուների հաղորդմանը, որի մեջ արտաստպված է այն նույն՝ 2010 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 21/32-570-10 գրության բովանդակությունը: Նշված գրության բովանդակությունը, ոչ մի կապ չունի դիմումատուների կողմից տրված հաղորդման հիմնավորումների և պատճառաբանությունների հետ:

Այսպիսով, ՀՀ գլխավոր դատախազն իր անգործությամբ ոչ միայն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված հանցագործության մասին տրվող հաղորդումներին ընթացք տալու ընթացակարգը, այլև իր նման դիրքորոշմամբ անլուրջ վերաբերմունք է ցուցաբերել իրավապաշտպան կազմակերպությունների կողմից տրված հաղորդումներին:

Գտնում եմ, որ ՀՀ գլխավոր դատախազին պետք է պարտավորեցնել դիմումատուների կողմից ներկայացված հաղորդման հիման վրա քրեական

հետապնդում հարուցել իր տեղակալի և «Նուբարաշեն» ՔԿՀ-ի պետի նկատմամբ հետևյալ պատճառաբանությամբ և հիմնավորմամբ:

ՀՀ սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ մարդուն կարելի է կալանավորել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 280-րդ հոդվածի համաձայն՝ միայն դատարանի որոշման հիման վրա են կիրառվում քրեադատավարական հարկադրանքի միջոցները, որոնցից է կալանքը որպես խափանման միջոց կիրառելը:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կալանավորվածներին պահելու վայրերում անձին պահելու հիմքը քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան կայացված դատարանի որոշումն է՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին: Առանց սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված հիմքերի կալանավորվածներին պահելու վայրերում անձին ընդունելն ու պահելն արգելվում է:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կալանավորված անձանց կալանքից անհապաղ ազատում է կալանավորվածներին պահելու վայրի պետը՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա:

Այսպիսով ինչպես Սարգիս Պողոսյանին կալանքի վերցնելը այնպես էլ նրան կալանքից ազատելը կատարվել են ՀՀ Սահմանադրության և քրեական դատավարության օրենսդրության կոպիտ խախտումներով, քանի որ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը չի հանդիսանում քրեական վարույթն իրականացնող մարմին, նա իրավասու չէր նաև դիմել «Նուբարաշեն» ՔԿՀ-ի պետին և հանձնարարել ՀՀ քաղաքացի Ս. Պողոսյանին ազատ արձակել կալանքից:

Տվյալ պարագայում, Սարգիս Պողոսյանը «Նուբարաշեն» ՔԿՀ ընդունվել և պահվել է ոչ թե դատարանի որոշմամբ, այլ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի գրության հիման վրա և այստեղ ՀՀ օրենսդրությունը շատ հստակ է և այլ կարծիք քան այն, որ Սարգիս Պողոսյանը դիմումատուների հաշվարկներով 28 օր «Նուբարաշեն» ՔԿՀ-ում ապօրինի պահվել է կալանքի տակ չի կարող լինել:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ կալանավորվածներին պահելու վայրերում օրենքների պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը և նրան ենթակա դատախազները՝ «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Մինչդեռ ՀՀ գլխավոր դատախազությունն է, որ սույն դեպքում խախտել է կալանավորվածներին պահելու վայրերում օրենքների պահպանման իր պարտականությունը և թույլ տվել կոպիտ խախտումներ, մի դեպքում անձին ապօրինի անազատության մեջ պահելու հրահանգ տալով, իսկ մյուս դեպքում մեր կողմից հանցագործության փաստի առիթով տրված հաղորդմանը օրենքով սահմանված կարգով ընթացք չտալով:

ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ակնհայտ ապօրինի կալանավորելը կամ ակնհայտ ապօրինի կալանքի տակ պահելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Տվյալ պարագայում, սույն հաղորդման մեջ նշված ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի և «Նուբարաշեն» ՔԿՀ-ի պետի գործողություններում

**առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածի 2-րդ մասով չթույլատրված արարքի կատարման հատկանիշներ:**

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատախազի նկատմամբ քրեական հետապնդում հարուցում է գլխավոր դատախազը կամ գլխավոր դատախազի տեղակալները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերը նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածը .

**Խ ն դ ր ու մ ե ն ք**

պարտավորեցնել ՀՀ գլխավոր դատախազին դիմումատուների կողմից ներկայացված հաղորդման հիման վրա հարուցել քրեական հետապնդում ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի և «Նուբարաշեն» ՔԿՀ-ի պետի նկատմամբ:

Կից ներկայացվում են.

1. Դիմումի պատճենը,
2. Դիմումատուների անձնագրերի պատճենները,
3. Դիմումատուների կազմակերպությունների պետական գրանցման վկայականների պատճենները,
4. 03.09.2010 թվականի ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված գրության պատճենը,
5. 11.09.2010 թվականի ՀՀ գլխավոր դատախազության գրության պատճենը,
6. 19.10.2010 թվականի ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված հաղորդման պատճենը,
7. 15.11.2010 թվականի ՀՀ գլխավոր դատախազության գրության պատճենը:

Դիմող՝

Ավետիք Իշխանյան

Դիմող՝

Արման Դանիելյան

Դիմող՝

Արթուր Սաքունց

10-ը դեկտեմբերի 2010 թվական